

սած՝ Հայոց թագին կից այս խանին մէջ, ուր ընկելիք բան մը չունէին, ինչ որ կ'ապացուցանէ թէ հոն հաւաքուած էին Հայերուն վրայ յարձակելու նպատակով. Յ. Թէ իրենց մահը կը զուգադիպի ճիշտ Հայերուն դէմ եղած յարձակումին միջոցին :

Այն իրողութիւնը որ հանդիսաւ թողուած են հեղինակները այն անանուն ոճիրներուն՝ որոնց Ատանա և իր շրջակաները թատր հանդիսացած են և որոնք ազգային արեւոյս մը համեմատութիւնները առած են. այն իրողութիւնը՝ որով իննայուած է այս յիշուողներուն, և ասոր փոխարէն դատապարտուած են Հայ դժբախտ վերապրողներ, որոնց միակ յանցանքը օրինաւոր ինքնապաշտպանութեամբ մահու ընդ խուսափիլը եղած է, չեմ կրնար ինքզինքս արգիլել տեսնելէ կրկին սպառնալով ինն մը՝ վերստին աչքէ անցուած և ճոխացած — Պոլսոյ համրտական կոտորածներուն :

Պատերազմական Ատանի այդ էֆէնտիները բոլորովին կ'անդիսանան որ՝ ոճիրներու վերաբերեալ խնդիրներու մէջ դատաւորները սպիալուած չեն իրր պարզ ճշմարտութիւն ընդունիլ վկաներու բոլոր բաժնէրը, և թէ ընդհակառակը, անոնք օրէնքով պարտաւոր են ճշտելու թէ այդ արուած վկայութիւնները կը յարձարին նիւթական կարելիութիւններու հետ, և հետեւաբար, ընդունելի՛ կամ ոչ :

Քննչական պայմաններու անբաւականութեան պատճառովն է որ պատերազմական ատանը կը շարունակէ դատապարտել այնպիսի անձեր, որ չուկայէն փախչելով ապաստանած են օտարան գտակներու տուներ, ուրկէ, նոյնիսկ օտարանպատակ երեւելիներու հաւատաւորներուն համաձայն, խուճովութեանց բովանդակ տեւողութեանը միջոցին դուրս չէին ելած :

Պարտաւճար ենք հաւասարապէս մտածել որ՝ պատե-